ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/443 «29» 04 2021թ.

Ձեր

«ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Խաչատրյանին
ք. Երևան, Դ.Անհաղթի 19/1, բն.70

Հարգելի պարոն Խաչատրյան

Համաձայն ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ » ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ոստիկանության կարիքների համար 2021 թվականի մարտի 24-ին կնքված թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) 7.5 և 7.13 կետերի նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 12.04. 2021թ-ին «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ » ՍՊԸ-ին ուղարկվել է թիվ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը՝ սահմանված ժամկետներում կնքելու, ստորագրելու և ՀՀ ոստիկանություն ներկայացնելու նպատակով: «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ » ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, 1-ին կետի պահանջներին համապատասխան պարտավոր էր մինչև 2021

թվականի ապրիլի 26-ը ներկայացնել իր կողմից կնքված և ստորագրված համաձայնագրերը:

Տեղեկացնում եմ, որ սահմանված ժամկետում «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ » ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից կնքված և ստորագրված համաձայնագրերը::

Հիմք ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի, 3-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները «ԱՐՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ » ՍՊԸ-ն զրկվում է համաձայնագրերը ստորագրելու իրավունքից և կնքված թիվ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծվում է:

Ոստիկանության գնդապետ **Վ. Մովսիսյան**